

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության գրասենյակի (ICITAP) զեկույցում նշված կետերի վերաբերյալ

1. ICITAP-ի դիտարկում՝ պարեկային ծառայողների սկզբնական հաղորդակցումը պրոֆեսիոնալ էր և տեղին:

- **ՀՀ ՆԳՆ պարզաբանում**՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ պարզվել է, որ 2023թ. փետրվարի 10-ին «Համեռ» մակնիշի ավտոմեքենայի վարորդի օրինախախտ տեղաշարժը կանխելու գործողություններին ի սկզբանե մասնակցել է գումարտակի հրամանատարը, իսկ տվյալ ավտոմեքենայի ՀՀ կառավարության շենքի մայթին բարձրանալուց հետո վերջինիս միացել է վաշտի հրամանատարը, ովքեր, ըստ պարեկ որակավորման սովորողներին «Ծառայության իրականացման մարտավարություն» մոդուլը դասավանդելու նպատակով ICITAP-ի ամերիկյան պարեկային դասախոսների կողմից կազմակերպած գործնական հմտություններ և կարողություններ ՃԵԿ-ի խախտման համար տրանսպորտային միջոցի կանգնեցումներ ու վարորդի մոտեցում, զինված անձանց տրանսպորտային միջոցից դուրսբերում, զինված անձանց թաքստոցներից հայտնաբերում, վնասազերծում, ձերբակալում վերապատրաստման կուրսերին մասնակցած ոստիկանության կրթահամալիրի դասախոսներ Արթուր Հակոբյանի և Վահագն Ֆրանկյանի՝ հանդիսանալով անձնակազմի նկատմամբ ղեկավարում իրականացնող անձինք և օժտված լինելով ցուցում տալու իրավասությամբ, ճիշտ չեն կողմնորոշվել ստեղծված իրավիճակում և ճիշտ չեն բաշխել ու արդյունավետ չեն կոորդինացրել ՃԵԿ-ի խախտումներ թույլ տված և ոստիկանության «Կանգ առ» պահանջին չենթարկված «Համեռ» մակնիշի ավտոմեքենան կանգնեցնելուն ներգրավված ուժերը, ինչի արդյունքում ստեղծվել է խառնաշփոթ և պարեկային ծառայողներից յուրաքանչյուրը, իրավիճակով պայմանավորված, անձամբ է պլանավորել իր գործողությունները, ինչի արդյունքում հնարավոր չի եղել կասեցնել օրինախախտ վարորդի տեղաշարժը, ուստի գումարտակի և վաշտի հրամանատարների գործողությունները չեն կարող դիտարկվել որպես պրոֆեսիոնալ, ինչի արդյունքում պարեկային ծառայողները միջոցներ չեն ձեռնարկել ծառայողական ավտոմեքենաներում առկա ապակի կտրելու հատուկ գործիքով վարորդի կողային ապակին կտրելու և ավտոմեքենայի դանդաղ ընթացքի կամ կայանման ժամանակ՝ պարեկային ավտոմեքենաներով «Համեռ» մակնիշի ավտոմեքենայի դիմացից և հետևից անշարժ գոտի ստեղծելու ու վարորդին վնասազերծելու համար:

2. ICITAP-ի դիտարկում՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելուն պես ծառայողները սկսում են ուղքով հետապնդումն ու պատշաճ կերպով զեկուցում Օպերատիվ կառավարման կենտրոն:

- **ՀՀ ՆԳՆ պարզաբանում**՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներով պարեկային ծառայողներն օպերատիվ կառավարման կենտրոնին ոչինչ չեն զեկուցել:

3. ICITAP-ի դիտարկում՝ կասկածյալի՝ մայթով չերթևեկելու և ոստ. ծառայողի՝ մեքենան կանգնեցնելու օրինական պահանջին չենթարկվելու դեպքում, ծառայողների՝ մեքենան կանգնեցնելու նպատակով հրազեն օգտագործելու որոշումը համապատասխանում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքին և ՊԾ Կանոնագրքին: Այս

պարագայում կասկածյալը որպես զենք օգտագործում է մեքենան, ոստիկանության ծառայողների և քաղաքացիների կյանքին և առողջությանը վնաս հանդիսանալու համար: Ծառայողների կողմից հրազենի օրենսդրության, ՊԾ Կանոնագրքի և միջազգային լավագույն փորձի համաձայն՝ ոստիկանների կողմից վարորդի նկատմամբ հրազենի գործադրումը՝ քաղաքացիների և ծառայողների կյանքի սպառնալիքը վերացնելու համար, արդարացված կլիներ: Ծառայողների կողմից հրազեն չգործադրելը գովելի փաստ է, բայց ավելի շատ կարող է պայմանավորված լինել ղեկավարության կողմից աջակցության բացակայության պատճառով աշխատանքից ազատվելու վախով, քան կասկածյալի առողջության համար մտահոգությամբ:

ICITAP-ի առաջարկություն՝ պետք է վերանայել հրազենի օգտագործման անիվները կամ մեքենան վնասելով կանգնեցնելու օրենքով նախատեսված պրակտիկան: Իմ մասնագիտական կարծիքով նման պրակտիկան արժեքավոր չէ և չնախատեսված թիրախին խոցելու սպառնալիքը չափազանց մեծ է: Ինչպես տեսանյութում երևում է, վարորդը շարունակում է վարել մեքենան անգամ վնասված/ հարթ անիվներով:

- **«ՆԳՆ պարզաբանում»** պարեկային ծառայողների կողմից հրազենի օգտագործումը «Համեռ» մակնիշի ավտոմեքենայի անվադողերի ուղղությամբ՝ տրանսպորտային միջոցի ընթացքը կանգնեցնելու նպատակով, առերևույթ իրավաչափ է, իսկ տվյալ ավտոմեքենայի ուղղությամբ՝ դիմապակու կամ մյուս կրակոցների արձակումն առերևույթ իրավաչափ չէ, քանի որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հրազենը գործադրվում է.

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պատանդներին, ինչպես նաև զավթված պետական պահպանության ենթակա օբյեկտները ազատելիս.

4) կյանքի, առողջության, սեփականության դեմ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու պահին բռնված և փախուստի փորձ կատարող, ինչպես նաև զինված դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

5) քաղաքացիների բնակարանների, պետական մարմինների, կազմակերպությունների զբաղեցրած տարածքների, պետական պահպանության ենթակա օբյեկտների, ինչպես նաև ուղեկցող ստորաբաժանումների վրա խմբակային կամ զինված հարձակումը հետ մղելիս.

6) կյանքի, առողջության, սեփականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս.

Հիշյալ հանգամանքներն առկա չեն եղել տվյալ դեպքում:

Ինչ վերաբերում է ծառայողների՝ ղեկավարության կողմից աջակցության բացակայության պատճառով աշխատանքից ազատվելու վախին, ապա 2021թ. հուլիսի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 12-ն ընկած ժամանակահատվածում պարեկային ծառայողների նկատմամբ իրականացվել են թվով 1145 ծառայողական քննություններ, որոնցից թվով 478 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, իսկ թվով 822-ի նկատմամբ կարգապահական տույժ չիրառվել՝ հիմք ընդունելով «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, այսինքն՝ ներվել են: